



<https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Վերջույթների ցավային համախտանիշներ

Տարբերակ 2016

6. Բարորակ գերշարժունակության համախտանիշ

6.1 Ի՞նչ է սա:

Գերշարժունակությունը վերաբերվում է երեխաներին, որոնց մոտ նկատվում է հոդերի ճկունություն կամ «թուլություն»: Այն կոչվում է նաև հոդերի անբավարարություն: Որոշ երեխաներ կարող են ցավ ունենալ: Բարորակ գերշարժունակության համախտանիշը (ԲԳՀ) վերաբերում է այն դեպքերին, երբ երեխան ունենում է վերջույթների ցավ, կապված հոդերի շարժունակության (շարժումների ծավալ) ավելացման հետ, առանց ուղեկցվելու շարակցական հյուսվածքի այլ հիվանդությունների հետ: Ինչևէ, ԲԳՀ -ը հիվանդություն չէ, այլ՝ նորմալի տարբերակ:

6.2 Ի՞նչ հաճախականությամբ է այն հանդիպում:

ԲԳՀ-ն չափազանց հաճախ հանդիպող վիճակ է երեխաների և դեռահասների մոտ: Այն հանդիպում է 10-30% երեխաների մոտ, մինչև 10 տարեկան հասակը, մասնավորապես աղջիկների մոտ: Հաճախականությունը նվազում է տարիքի հետ: Հաճախ են ընտանեկան դեպքերը:

6.3 Որո՞նք են հիմնական նշանները:

Գերշարժունակության դեպքում հաճախ առաջանում են ընդմիջվող բնույթի, խորը տեղակայման, կրկնվող ցավեր ծնկների, ոտնաթաթերի և սրունք-թաթային հոդերի շրջանում: Ցավը ի հայտ է գալիս օրվա վերջում կամ գիշերը: Դաշնամուր, ջութակ նվագող երեխաները կարող են նշել մատների ցավ: Ֆիզիկական

ակտիվությունը կարող է խթանել ցավի առաջացումը կամ ուժեղացումը: Հազվադեպ, կարող է առաջանալ հոդերի թեթև այտուց:

6.4 Ինչպե՞ս է այն ախտորոշվում:

Ախտորոշումը դրվում է նախապես հստակեցված չափորոշիչների հիման վրա, որոնցով քանակապես որոշում են հոդերի շարժունակությունը շարակցական հյուսվածքի այլ հիվանդությունների բացակայության պայմաններում:

6.5 Ո՞րն է բուժումը:

Բուժումը հազվադեպ է անհրաժեշտ լինում: Եթե երեխան զբաղվում է որոշակի ծանրաբեռնվածության սպորտաձևերով, ինչպիսիք են ֆուտբոլը կամ մարմնամարզությունը, ապա նրա մոտ պարբերաբար առաջանում են հոդերի ձգում/պատռվածք, անհրաժեշտ է լինում մկանների ամրապնդում և հոդերի պաշտպանում (էլաստիկ կամ ֆունկցիոնալ ամրակապեր):

6.5Ի՞նչ կասեք առօրյա կյանքի մասին:

Գերշարժունակությունը բարորակ վիճակ է , որը տարիքի հետ նվազում է: Կարևոր է բացատրել ծնողներին, որ խնդիրները ավելի շատ կապված են այն բանի հետ, որ նրանք հաճախ չեն թույլատրում երեխային նորմալ կյանքով ապրել:

Երեխաներին պետք է խրախուսել, որ նրանք ունենան նորմալ կյանք ինչպես նաև զբաղվեն իրենց հետաքրքրող որևէ սպորտաձևով: